**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության՝

**նախարարության կողմից համակարգվող ոլորտներում փորձառության մասին**

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը (այսուհետ՝ արհմիություն) շուրջ 10 հազար պետական և համայնքային աշխատողներ միավորող, բայց, ըստ էության, բոլորի շահերը ներկայացնող միակ ճյուղային հանրապետական արհմիությունն է Հայաստանում, որը գործում է համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած Աշխատանքի միջազգային կազմակերպության «Միավորման ազատության և կազմակերպվելու իրավունքի մասին» թիվ 87 հիմնարար կոնվենցիայի, վավերացված «Վերանայված Եվրոպական Սոցիալական Խարտիայի», Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ՀՀ Սահմանադրության, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի և հիմնադիր ժողովում պատվիրակների կողմից ընդունված և ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության: 2002թ վերագրանցվել է պետական ռեգիստրում համաձայն 2000 թ ընդունված «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի, իսկ մինչ այդ պահը գործել է նախորդ օրենսդրական կարգավորումների համաձայն:

Արհմիությունն առաջ է տանում Հայաստանի պետական ու համայնքային աշխատողների ու նրանց ընտանիքների աշխատանքային և սոցիալ-տնտեսական շահերն ու պաշտպանում է նրանցով իրավունքները, այդ թվում՝ շարունակաբար ՀՀ կառավարությանը և ոլորտային գերատեսչություններին ներկայացնելով օրենսդրական առաջարկներ, վերլուծություններ, փորձագիտական կարծիքներ:

Արհմիության ներկայացուցիչը՝ կազմակերպական աշխատանքների և արտաքին կապերի մասնագետը, ով սույնով ներկայացվում է նախարարին կից հասարակական խորհրդում ներառվելու համար, ընտրված է որպես ՀՀ և ԵՄ միջև ստորագրված ՀԸԳՀ (CEPA) համաձայնագրով ստեղծված Քաղհասարակության Պլատֆորմի անդամ[1], որտեղ, ի թիվս այլ թեմաների, մասնակցում է կատարում է միգրացիայի ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում:

Մասնավորապես, իր նախաձեռնությամբ ստեղծվել է ՀԸԳՀ ոլորտների կատարման ընթացքը ցուցադրող ինտերակտիվ գործիք, որը ներառում է նաև միգրացիայի և մարդկանց տեղաշարժի վերաբերյալ բաժին[2], որում եղած տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է ՀՀ Ներքին գործերի նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա:

Մշտադիտարկման աշխատանքների շրջանակներում մշակվել են հետազոտություններ և զեկույցներ: Մասնավորապես, մշակվել է «*ՀՀ-ում անկանոն միգրացիայի և սահմանների կառավարման խնդիրները ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության Համաձայնագրի համատեքստում*» խորհրդատվական հետազոտությունը (կցվում է), որում

---

[1] https://eu-armenia.am/%D6%84%D5%A1%D5%B2%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%AC%D5%A1%D5%BF%D6%86%D5%B8%D6%80%D5%B4

[2] https://eu-armenia.am/migration-and-movement-1

անդրադարձ է կատարվում ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների մուտքին, ոչ օրինական հիմքով Հայաստանում գտնվելու և անօրինական աշխատանքներում ներգրավվելու խնդրին[3]:

Մշակվել է «*Persistent problems of labour and social governance of Armenia in view of European integration*» քաղաքականության համառոտագիրը (անգլերեն), որում անդրադարձ է կատարվել միգրացիոն հոսքերի և աշխատանքային միգրացիայի խնդիրներին՝ պարունակելով առաջարկներ Ներքին գործերի նախարարությանը (փաստաթուղթը կցվում է):

Արհմիության նշված ներկայացուցիչը 2024-2025 թվականներին հանդիսացել է ՀՀ Ներքին գործերի նախարարին կից գործող հասարակական խորհրդի անդամ:

Արհմիության կողմից մշակված փորձագիտական կարծիքներին, գրություններին, առաջարկներին և վերլուծություններին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ արհմիության պաշտոնական կայքում՝ arhmiutyun.org և սոցիալական ցանցերում՝ https://www.facebook.com/arhmiut :

2015 թվականից արհմիությունն անդամակցում է Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությանը (EPSU, տեղակայումը՝ Բրյուսել) և Հանրային ծառայությունների միջազգային արհմիությանը (PSI, տեղակայում՝ Ժնև):

2023 մինչ այսօր արհմիության Ներկայացուցիչը հանդիսանում է Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիության (EPSU) Պետական կառավարման հարցերով մշտական հանձնաժողովի անդամ[4] և *միգրացիայի հարցերով* ցանցի անդամ:

---

[3] Հասանելի է նաև Քաղհասարակության պլատֆորմի տարեկան զեկույցում, տես eu-armenia.am կայքի Քաղհասարակության պլատֆորմ – Զեկույցներ բաժնում, «Տարեկան զեկույց 2024», 76-84 էջեր:
[4] https://www.epsu.org/search?destination=/congresses/congress-2009&f%5B0%5D=sectors%3A88&order=desc&sort=created